ՀՏԴ:929:891.981.09 Մուրադյան

Doi:10.54503/0135-0536-2025.1-312

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*

Լրացավ անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ակադ. Հրանտ Թամրազյանի անվան

հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի երկարամյա դասախոս, նույն ամբիոնի վարիչ (2001–2021 թթ.) ապա՝ պատվավոր վարիչ, պրոֆեսոր (2004 թ.) Սամվել Պարգևի Մուրադյանի ծննդյան 80-ամյակը: Նա իր կյանքի տարիներից շուրջ 60-ը նվիրել է Մայր բուհին՝ գիտությանը, գրականությանը և սերունդներ կրթելու պատասխանատու գործին:

Ս. Մուրադյանը ծնվել է 1945 թ. հունվարի 20-ին Արագածոտնի մարզի Աղձք (նախկինում՝ ՀԽՍՀ Աշտարակի շրջանի Ջորափ) գյուղում՝ Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Արծկե քաղաքից 1915 թ. Հայոց ցեղասպանության հետևանքով բռնագաղթած ընտանիքում:

1961 թ. ավարտելով ծննդավայրի միջնակարգ դպրոցը, որի տնօրենը Հայրենական պատերազմից վիրավոր վերադարձած իր հայրն էր՝ ուսումը շարունակելու նպատակով տեղափոխվել է Երևան, սովորել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների տեխնիկումում՝ ստանալով մաթեմատիկոս-ծրագրավորողի որակավորում:

1964 թ. Ս. Մուրադյանն ընդունելության քննություններ է հանձնում՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետ ընդունվելու համար: Մեկ միավորի պակասի պատճառով, սակայն, բանասիրական ֆակուլտետ չի ընդունվում: Առաջարկում են հրամանագրվել իրավաբանության ֆակուլտետում. այնտեղ թափուր տեղեր կային: Հրաժարվում է: Եվ միայն Հովհ. Շիրազի միջնորդությամբ ու ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Գևորգ Հայրյանի բարյացակամության շնորհիվ նա ընդունվում է իր նախընտրած բաժինը:

Մասնագիտական կողմնորոշման այս կտրուկ փոփոխության մեջ որոշիչ նշանակություն են ունենում ոչ միայն ընտանեկան մթնոլորտն ու անձնական նախասիրությունները՝ բացառիկ սերը հայ գրականության նկատմամբ, այլև 1960-ական թվականների ազգային զարթոնքի երևանյան շիկացած մթնոլորտը և, մանավանդ, հանդիպումն ու անմիջական մտերմությունը բանաստեղծ Հովհ.

---

* Ներկայացվել է 12. II. 2025 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:

Շիրազի հետ, ով շուրջ քառորդ դար (1961–1984 թթ.) Ս. Մուրադյանի հոգեհարազատ բարեկամներից էր: Իսկ հետո շփումը համալսարանական սիրելի ու անվանի դասախոսների՝ ակադեմիկոսներ Մ. Մկրյանի, Հր. Թամրազյանի, Էդ. Ջրբաշյանի, Էդ. Աղայանի, Գ. Ջահուկյանի և ուրիշների հետ, Մուրադյանի ներգրավումը 1960-ականների գրական-մշակութային կյանքին և ջերմ ու սերտ մտերմությունը ժամանակի գրողներից Պ. Սևակի, Հ. Սահյանի, Հր. Մաթևոսյանի հետ նրան մեկընդմիշտ կապում են հայ գրականությանն ու մշակույթին, և նա ճանաչվում է որպես հայ գրականության ու, հատկապես, պոեզիայի հմուտ գիտակներից: Այս առավելությունը մշտապես նկատվել է նրա հագեցած դասախոսություններում, գիտական զեկուցումներում ու հրապարակային բանախոսություններում:

Ստանալով բանասերի՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում՝ 1969–1972 թթ. Ս. Մուրադյանն աշխատանքի է անցնում ԵՊՀ հայագիտական կենտրոնում, ինչպես նաև հայցորդ գրանցվում սովետահայ գրականության ամբիոնում: Նա, որպես համալսարանի հայագիտական կենտրոնի աշխատակից, անմիջական մասնակցություն է ունենում Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի», Հ. Մանանդյանի և Գ. Տեր-Մկրտչյանի (Միաբան) հայագիտական աշխատությունները տպագրության պատրաստելու գործում: Իսկ 1972 թ. մարտից Ս. Մուրադյանը ստանձնում է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի պատասխանատու քարտուղարի պաշտոնը և մինչև 1985 թ. խմբագրակազմի հետ տպագրում այդ հեղինակավոր պարբերականի 50 համար: 1986 թ. խմբագրում է պրոֆեսորներ Թ. Հակոբյանի, Ստ. Մելիք-Բախշյանի և Հովհ. Բարսեղյանի «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» առաջին հատորը:

Այդ ժամանակաշրջանում ճշգրտվել ու դրսևորվել են Ս. Մուրադյանի գիտական հետաքրքրությունները, որոշակիանում վերաբերմունքն իր նախասիրած հեղինակների հանդեպ: Առաջնեկը Հարություն Սուրխաթյանն էր՝ XX դ. հեղինակավոր գրաքննադատներից մեկը, ում ծառայությունները հատկապես մեծ են նորագույն գրականության՝ Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Գ. Մահարու ստեղծագործությունների գնահատման, դպրոցում գրականության դասավանդման նոր սկզբունքների արմատավորման, ինչպես նաև հին ու նոր հայ գրողների, հին հունական գրականության, համաշխարհային դասականներ Շեքսպիրի, Տոլստոյի, Դոստոևսկու, Թումանյանի, Տերյանի, նաև Իբսենի, Մետերլինկի հանրայնացման ուղղությամբ: 1984 թ. հաջողությամբ պաշտպանելով «Հարություն Սուրխաթյան» թեմայով ատենախոսությունը՝ Ս. Մուրադյանը ստանում է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Ատենախոսությունը որպես մենագրություն տպագրել է 1988 թ.:

ԵՊՀ նախապատրաստական ֆակուլտետում տարիներ շարունակ հայոց լեզու և գրականություն ուսուցանելուց հետո Ս. Մուրադյանը 1984 թ. դասախոսական աշխատանքի է անցնում հայ գրականության պատմության ամբիոնում: Զուգակցելով մանկավարժական և գիտական գործունեությունը՝ շուտով ստանում է դոցենտի կոչում:

1992 թ. Երուսաղեմի հայոց պատրիարքարանի հրավերով Ս. Մուրադյանը մեկնում է Երուսաղեմ ու երկու տարի տեղի Ժառանգավորաց վարժարանում և

Ընծայարանում դասավանդում հայ գրականություն ու Նոր կտակարան: Մասնավորապես գործուղման ընթացքում նա Երուսաղեմի Գյուլբենկյան մատենադարանում ուսումնասիրում է մեծ երգիծաբան Երվանդ Օտյանի կյանքն ու ստեղծագործությունը և վերադարձին՝ 1994 թ., իր հետ Երևան բերում արդեն ավարտած «Երվանդ Օտյան. կյանքը և ստեղծագործությունը» դոկտորական ատենախոսությունը, որը պաշտպանում է 1995 թ. և ստանում բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Ատենախոսությունը որպես մենագրություն տպագրվում է 1996 թ.՝ այն նվիրելով մեծ տառապյալ Ե. Օտյանի և Հայոց եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Տեսադաշտում ունենալով օտյանագիտության անցած ամբողջ ճանապարհը՝ Ս. Մուրադյանը նորովի է համակարգել հայ ամենաբեղմնավոր գրողներից և հրապարակագիրներից մեկի ժառանգությունը՝ համակողմանիորեն քննելով ու մեկնաբանելով մեծ երգիծաբանի կյանքի դրվագները, նրա ստեղծագործության՝ մի ամբողջ համակարգ կազմող ծանոթ և անծանոթ էջերը: Մենագրության լրամշակված տարբերակը լույս է տեսել 2012 թ.:

2001 թ. Ս. Մուրադյանն անդամակցում է Հայաստանի գրողների միությանը (ՀԳՄ), այնուհետև դառնում նրա վարչության անդամ: Անմնացորդ եռանդով մասնակցում է հանրապետության գիտական ու գրական-մշակութային կյանքին, հայ գրականության տարաբնույթ խնդիրների մասին գիտական զեկուցումներով հանդես գալիս միջազգային ու հանրապետական գիտաժողովներում, հրապարակային բանախոսություններով՝ Երուսաղեմում, Բեյրութում, Թբիլիսիում, Հալեպում, Թեհրանում, Սպահանում, ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում և այլուր: Թեհրանում ու Սպահանում 2008 թ. նա վարել է Իրանի հայկական դպրոցների 75 ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Նոր շրջանի հայ գրականության պատմության դասընթացին զուգահեռ՝ նա դասավանդել է «Գրական ուղղությունները և հոսանքները 19-րդ դարի հայ գրականության մեջ», «Համեմատական գրականագիտություն», «Ազգային ճակատագիրը և հայ պոեզիան», «Հայ պոեմի արվեստը» (վերջին երկուսը մագիստրատուրայում) առարկաները:

Ս. Մուրադյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է հայ գրականությունն իր բոլոր դրսևորումներով՝ հնից ու միջնադարյանից սկսած մինչև նոր ու նորագույն: Ավելի քան 130 գիտական ու գիտամեթոդական հոդվածների և ուսումնասիրությունների, 10-ը մենագրությունների, ուսումնական ձեռնարկների հեղինակ է, որոնցից առավել կարևոր են Ե. Օտյանին և Հովհ. Շիրազին նվիրվածները («Հովհաննես Շիրազ: Բանաստեղծը, Մարդը», գիրք Ա, Երևան, 2012, գիրք Բ, Երևան, 2016): Վերջիններում գրականագետը ներկայացրել է իր ճանաչած Հովհ. Շիրազ մարդուն ու բանաստեղծին և ընութագրել նրա կյանքն ու ստեղծագործությունը՝ սկսած վաղ մանկությունից, գրական առաջին քայլերից մինչև նրա հզոր վերելքը՝ բազմաթեմա քնարերգության բարձունքները: Այս մենագրությունն արժանացել է ՀԳՄ «Նիկոլ Աղբալյան» գրական մրցանակին:

Հայ գրականագիտության մեջ կարևոր ներդրում են Ս. Մուրադյանի «Գրական հանգրվաններ» շարքի չորս հատորները (գիրք Ա, Երևան, 2003, գիրք Բ, Երևան, 2007, գիրք Գ, Երևան, 2010, գիրք Դ, Երևան, 2021, իսկ Ե հատորը տպագրության ընթացքում է): Դրանք պատկերացում են տալիս նրա ընդգրկուն

հայացքի և գիտական լայն հետաքրքրությունների մասին: Այս հատորներում նոր մեկնաբանությամբ լուսաբանվում են հայ գրականության պատմության տարբեր շրջափուլերի, գրողների ու նրանց ստեղծագործությունների վերաբերյալ տարաբնույթ մի շարք խնդիրներ:

Պրոֆ. Ս. Մուրադյանն առաջինն է խիզախել հանրապետության ուսանողության համար ստեղծել հայ նոր գրականության պատմության բուհական դասագիրք (Ա հատորը լույս է տեսել 2021-ին, Բ և Գ հատորները շարադրման ընթացքում են), որի էջերում արդի գրականագիտության դիրքերից հայ նոր գրականության հիմնախնդիրները, գրողներն ու նրանց երկերը ներկայացված են նորովի վերլուծությամբ:

Ս. Մուրադյանն իր աշխատություններում բազմաղարյա հայ ազգային գրականությունն ուսումնասիրել է նոր՝ գրական ազգակցության տեսանկյունից՝ համաշխարհային գրական մտքի զարգացման խորապատկերում, և հայ գրողների լավագույն գործերը ներկայացրել է սեփական ընկալումներով ու յուրատիպ վերլուծություններով, որով դրանք արժևորվում են իրենց բովանդակության և գեղարվեստական յուրահատկությունների նորովի բացահայտումներով:

Բազմաթիվ գիտական ու գեղարվեստական գրքեր են լույս տեսել Ս. Մուրադյանի խմբագրությամբ և ուղղորդող առաջաբաններով: Վերջերս տպագրվածներից առավել կարևոր են Դավիթ Գասպարյանի «Եղիշե Չարենցի կյանքը և իր ժամանակը» մեծածավալ հանրագիտարանային գիրքը (Երևան, 2022) և «Համո Սահյան» մենագրությունը (Երևան, 2023):

Նա եղել է Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի երկերի ակադեմիական հրատարակությունների խմբագրակազմի եռանդուն անդամ, Հովհ. Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» տասհատորյակի վերահրատարակության 5-րդ հատորի (Երևան, 2023) գլխավոր խմբագիր:

Ս. Մուրադյանը մեծ ներդրում ունի հատկապես Հովհ. Շիրազի անտիպ ձեռագրերի հրատարակման գործում: Կարևոր են հատկապես «Անի» (Երևան, 2011), «Թոնդրակեցիները» (Երևան, 2014) պատմափիլիսոփայական պոեմների և, հատկապես, «Հայոց դանթեականը» դատաստանամատյան-պոեմի ամբողջական հրատարակությունները (Երևան, 2021): Վերջինը նա իրականացրել է պոեմի ձեռագրերի, վեց մեքենագիր տարբերակների և 1989 թ. տպագրվածի համեմատությամբ, «գավլիտի» և խմբագիրների կրճատած հատվածների, դրանց մի մասի իր հիշողության վերականգնմամբ: Խիստ արժեքավոր են նաև բանաստեղծի բազմաթիվ ձեռագրերից ընտրված, գրական ուղու տարբեր տարիներին գրված, սակայն չհրատակված գործերի «Անտիպ էջեր» խորագրով չորս հատորները (գիրք Ա, Երևան, 2018, գիրք Բ, Երևան, 2019, գիրք Գ, Երևան, 2020, գիրք Դ, Երևան, 2023), որոնք դարձյալ կազմել, խմբագրել է Ս. Մուրադյանը՝ կցելով ընդարձակ առաջաբաններ ու ծանոթագրումներ:

Ս. Մուրադյանը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Ազգային գրադարանի, Խ. Աբովյանի, Հովհ. Թումանյանի տուն-թանգարանների, Գյումրու Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարանի, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհուրդների անդամ է, ՀԳՄ վարչության անդամ, ԵՊՀ և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի

հայագիտական հանդեսների, ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» և «ՎԷմ» համահայկական հանդեսի խմբագրակազմի անդամ: Տարիներ շարունակ եղել է ՀՀ Նախագահի պետական մրցանակ շնորհող հանձնախմբի անդամ, իր խմացություններն ու հմտությունները դրսևորել 2009 և 2019 թթ. ԵՊՀ 90 ու 100-ամյակների առթիվ հրատարակված «Կենսագրական հանրագիտարանի» խմբագրական խորհրդի կազմում աշխատելիս:

Ս. Մուրադյանը ԵՊՀ-ում գործող ԲԿԳԿ-ի՝ «Գրականագիտություն 012» մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է, եղել է նաև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող 003 բանասիրական գիտությունների դոկտորի աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ:

Երկարամյա աշխատանքի մեջ առանձին տեղ է զբաղեցնում Ս. Մուրադյանի հանրային գործունեությունը: Նա ոչ միայն եռանդով մասնակցում է հանրապետության գրական-մշակութային ու գիտական միջոցառումներին, այլև հաճախ է լինում մայրաքաղաքի, տարբեր մարզերի մշակութային կենտրոններում, սահմանամերձ գյուղերի դպրոցներում:

Ս. Մուրադյանը ՀԳՄ Սուրեն Քոչարյանի անվան ամունքի խմբի (ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Սամվել Բաղինյան) գեղարվեստական գլխավոր խորհրդատուն է, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձուների խորհրդի անդամ է, այդ հիմնադրամի բարեգործական ծրագրերի իրականացնողներից և «Բարեգործ» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիրը:

1997 թ. Բեյրութում Ս. Մուրադյանը զեկուցումով հանդես է եկել Ե. Չարենցի 100-ամյակին նվիրված հանդիսությանը, իսկ 2015 թ.՝ տեղի Ահրամյան վարժարանի դպրոցում բանախոսել Սայաթ-Նովայի մասին և Արամ Ա վեհափառի հրավերով 2019 թ. վարել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի կազմակերպած հայագիտական դասընթացները:

2005-ին նա հրավիրվել է Հալեպ՝ Նազարյան սրահում Հովհ. Շիրազի ծննդյան 90 և Պ. Սևակի 80-ամյակների առթիվ բանախոսելու, 2006-ին հանդես գալու հայ գրականության մասին հրապարակային 14 բանախոսություններով:

Տասնմեկ տարի (2006–2017 թթ.) շարունակ Ս. Մուրադյանն եղել է ՀՀ Ազգային ժողովի և յոթ տարի Շուշիում ամերիկահայ բարերարների կազմակերպած համահայկական ամունքի մրցույթ-փառատոների գնահատող հանձնախմբերի կազմում և որպես գլխավոր բանախոս՝ Հայաստանից ու Սփյուռքից ժամանած հազարավոր մասնակիցների առջև Հայաստանում և Շուշիում հանդես եկել հայ գրականութ-յան մասին տպավորիչ ելույթներով:

Այժմ էլ նա լի է երիտասարդական ավյունով, իր մեծ կենսափորձով, անմնացորդ նվիրումով նպաստում է նաև Գյումրու «Շիրակ» համալսարանի, Հովհ. Շիրազի թանգարանի և Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի բովանդակալից ու նպատակասլաց գործունեությանը:

Ս. Մուրադյանի գիտամանկավարժական ու հանրային գործունեության նվաճումները գնահատված են ՀՀ մրցանակներով ու պարգևներով: Նշենք կարևորագույնները. 2008 թ.՝ Ֆրիտյոֆ Նանսենի մեդալ, 2009 թ.՝ ՀՀ ԿԳ նախարարության Ոսկե հուշամեդալ, 2012 թ.՝ ՀԳՄ «Գրական վաստակի համար» ոսկե մեդալ, 2012 թ.՝ Ազգային ժողովի Պատվո մեդալ, 2013 թ.՝ Ազգային ժողովի

պատվոգիր՝ Ամոնքի հանրապետական մրցույթ-փառատոնի կայացման գործում մեծ ավանդ ունենալու համար, 2014 թ. ՀՀ վարչապետի Ոսկե հուշամեդալ, 2015 թ.՝ ՀՀ Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալ, 2016 թ.՝ ԵՊՀ Ոսկե մեդալ, 2016 թ.՝ «Հովհաննես Շիրազ» հուշամեդալ, 2018 թ.՝ Հավաստագիր՝ Շուշիում կազմակերպված համահայկական ամոնքի յոթերորդ փառատոնի գնահատող ժյուրիի կազմում աշխատելու համար:

2014 թ. Ս. Մուրադյանն արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Սրտանց շնորհավորում ենք մեծավաստակ ու բանիբուն գիտնականին ծննդյան 80-ամյակի կապակցությամբ և ցանկանում քաջառողջություն, գիտակրթական բեղմնավոր գործունեություն և ընտանեկան երջանկություն:

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Բ. գ. թ., ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ նոր գրականության պատմության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ժողովրդական բանահյուսություն, հայ գրականություն: Հեղինակ է 1 մեթոդական ձեռնարկի և 40 հոդվածի: ORCID:0009-0005-1818-1780. avagyan.vachik@yandex.ru